

ԿԱՐԾԻՔ

ՏԻԳՐԱՆ ԼԵՈՆԻԴԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ՝ ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ
ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆՈՐԱՀԱՅՑ ԱՐԱԲԱՏԱՌ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (XII-XIX դդ.)» ԽՈՐԱԳՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Ատենախոսությունը նվիրված է մի ժամանակաշրջանի, երբ Հայաստանն անընդհատ ենթարկվում էր մուսուլմանական տարբեր ցեղախմբերի արշավանքների և արդյունքում հսկայական վնասներ էին հասցվում ինչպես պատմամշակութային ժառանգությանը, այնպես և ժամանակի ընթացքում փոխվում էր ժողովրդագրական պատկերը:

Քոչվոր ցեղախմբերի պարբերական հաստատումով Հայաստանի տարածքում աստիճանաբար նվազում էր հայ ժողովրդի թվաքանակը՝ պայմանավորված բազմաթիվ գործոններով: Արդյունքում, մուսուլմանական տարրի հաստատումով, նրանք իրենց հետ բերեցին որոշակի ժառանգություն, որն աստիճանաբար ազդեց, հաճախ նաև փոխազդեց տեղաբնիկ մշակույթի հետ և մեր հայրենիքի տարածքում հայտնվեցին մուսուլմանական հուշարձաններ և արաբատառ արձանագրություններ: Այդ հուշարձաններն այժմ դարձել են մեր երկրի պատմամշակութային ժառանգության մի մասը և շատ կարևորում են նմանօրինակ աշխատանքների ի հայտ գալը, որոնք արված են ակադեմիական չափանիշներին համապատասխան՝ պահպանելով օբյեկտիվության սկզբունքները:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից և հավելվածից, որտեղ ատենախոսը ներկայացրել է թեմայի հետ անմիջական առնչություն ունեցող մի շարք լուսանկարներ:

Առաջաբանում ներկայացված է թեմայի ուսումնասիրման կարևորությունը, գիտական նորույթը, մեթոդաբանությունը, աղբյուրագիտական հիմքը, որը հեղինակի մոտ լիովին հաջողվել է: Ատենախոսն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է

դնում երկու տասնյակից ավել արձանագրությունների վերծանություններ, որոնք արված են ոչ միայն քարի վրա, այլ նաև խեցեղեն, մետաղե և ապակե գտածոներին:

Առաջին գլուխը վերնագրված է «Հայաստանի արաբատառ արձանագրությունների ծագումը, տեղագրությունը և ուսումնասիրության պատմությունը» և բաղկացած է երեք ենթագլուխներից: Առաջին ենթագլխում հեղինակը բժախնդրորեն անդրադարձել է ՀՀ արաբատառ արձանագրությունների ուսումնասիրության պատմությանը 19-րդ դարից մինչև մեր օրեր: Բարձր եմ գնահատում աստենախոսության աղբյուրագիտական հենքը և աշխատանքի հրատարակումից հետո, կարծում եմ, շատ օգտակար կարող է լինել երիտասարդ հետազոտողների համար: Հաջորդ ենթագլուխներում ևս աստենախոսը մանրամասն անդրադառնում է մուսուլմանական տարրի հաստատմանը պատմական Հայաստանում՝ կարևոր հիմք ստեղծելով հետագա տեքստի ամբողջական ընկալման համար՝ քննարկելով հուշարձանների տիպաբանական առանձնահատկությունները և դրանց գործառույթները սոցիալ-կրոնական միջավայրում:

Հատուկ ուզում եմ ընդգծել հեղինակի կողմից Որոտնավանի մուսուլմանական գերեզմանոցի ուշմիջնադարյան արաբատառ տապանաքարերի ուսումնասիրությունը, որի արդյունքում աստենախոսը հանգում է հետևյալ ուշագրավ եզրակացության, որ դրանք պատկանել են կրոնափոխ եղած հայերի:

Երկրորդ գլուխը, որը կազմում է աստենախոսության ատաղձը, հեղինակը ներկայացրել է ՀՀ տարածքում արաբատառ նորահայտ արձանագրությունները:

Այն բաղկացած է երկու ենթագլուխներից, որոնցում հեղինակն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրել մի շարք վիմագրեր, տվել դրանց մանրամասն նկարագրությունը և վերծանությունը: Կարևորում եմ, որ հեղինակը նորահայտ վիմագրերը դիտարկել է ժամանակագրական և պատմական համատեքստում: Հաջողված եմ համարում նաև երկրորդ ենթագլուխը, որտեղ աստենախոսը տալիս է արձանագրությունների տիպաբանությունը և դրանց հնագրական արժեքը:

Խիստ արժեքավոր եմ համարում երրորդ գլուխը, որը վերնագրված է «Նոր ընթերցված արաբատառ արձանագրությունները խեցեղենի, ապակու և մետաղյա առարկանների վրա»: Դրվատելի է, որ աստենախոսը չի սահմանափակվել միայն վիմագիր հուշարձաններով, այլև առաջին անգամ մեր իրականության մեջ փորձել է համակարգված անդրադառնալ նաև պեղումների արդյունքում կամ պատահականորեն

հայտնաբերված գտածոներին: Սա բոլորովին նոր հորիզոններ է բացում ոչ միայն արևելագիտության, այլ նաև հնագիտության համար, քանի որ շերտագրական և համեմատական դիտարկումներին օգնության են գալիս նաև արձանագրությունների բովանդակությունները: Ատենախոսության երրորդ գլուխը միաժամանակ նորանոր հարցեր է բարձրացնում և կարծում եմ դրանց գիտական ձևակերպումը պակաս կարևոր չէ և կարող է ավելի կանոնակարգված ուսումնասիրության ճանապարհ բացել:

Ատենախոսությունն ավարտվում է եզրակացություններով, որոնց բովանդակությունը լիարժեք պայմանավորված է նյութի շարադրանքի կուռ տրամաբանությամբ և բոլորն էլ հիմնավորված են:

Բարձր գնահատելով այս աշխատանքը՝ միաժամանակ ունենք որոշակի դիտողություններ, որոնք, կարծում ենք, կօգնեն հեղինակին իր հետագա ուսումնասիրությունների ընթացքում.

- Սարավանի խոյատապանի թվագրությունը խիստ թեական է և դրա վրա հիմնվելով եզրակացնել, որ Հայաստանի տարածքում խոյատապանները հայտնվել են 13-րդ դարում, կարծում եմ ճիշտ չէ և կարիք կա վերանայման: ՀՀ տարածքում խոյատապանները հայտնվում են 15-րդ դարից ոչ շուտ և Սարավանի օրինակը ևս պետք է վերագրել այդ շրջանին:
- Ցանկալի կլիներ 3.2 ենթագլխում գրատեսակին անդրադարձը ներկայացվեր նաև ժամանակի ընթացքում դրանց կրած ոճական և ձևաբանական փոփոխությունների համատեքստում:
- Աշխատանքում անդրադարձ չկա Սևանի արևելյան հատվածի բնակավայրերի 17-19-րդ դդ. արաբատառ արձանագրություններին, որոնք բավականին ստվար խումբ են կազմում: Դրանցից մեկն, օրինակ հրատարակվել է Ավետիս Գրիգորյանի կողմից «Պատմաբանասիրական հանդես»-ի 2021 թ. առաջին համարում (էջ 138):
- Էջ 54-58-ում տրված է Որոտնավանի ուշմիջնադարյան տապանաքարերի շատ արժեքավոր ցանկը, սակայն ցանկալի կլիներ, որ այն տարվեր հավելված՝ տեքստը չծանրացնելու համար:
- Լոռի բերդից հայտնաբերված Սուբհանվերդի կնիքի գրության ընթերցումը շատ կարևոր է, ուստի կարծում եմ կարելի էր ավելի ընդարձակել դրա

մասին տեղեկությունները և կնիքը ներկայացնել Լոռի բերդի պատմության համատեքստում:

Նշված մասնակի դիտողությունները բնավ չեն սովերում պաշտպանության ներկայացված ատենախոսությունը և ունեն գուտ խորհրդատվական նշանակություն:

Ամփոփելով մեր խոսքը, նշենք, որ Տիգրան Միքայելյանի ատենախոսությունը ուսումնասիրված է համակողմանի, կառուցված կուռ տրամաբանության վրա, որտեղ մեկտեղված են աղբյուրագիտական հարուստ հենքը և իր կողմից արված հիմնավոր դիտարկումները:

Կարծում ենք, որ ատենախոսությունը միանգամայն համապատասխանում է Է.00.05 «Պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար անհրաժեշտ պահանջներին:

Սեղմագրում նշված հոդվածներն արտահայտնում են ատենախոսության հիմնական դրույթները, իսկ սեղմագիրը՝ բովանդակությունը:

Ելնելով վերոշարադրյալից՝ միջնորդում եմ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտական աստիճաններ շնորհող խորհրդի մեծարգո անդամների առջև Տիգրան Լեոնիդի Միքայելյանին շնորհել իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը, որին հեղինակը լիովին արժանի է:

Պաշտոնական ընդդիմախոս՝ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Միջնադարյան հնագիտության բաժնի վարիչ,

պատմ. գիտ. թեկնածու Դիանա Հրաչյայի Միրիջանյան

Պատմ.գիտ. թեկնածու Դ. Հ. Միրիջանյանի ստորագրությունը հաստատում եմ

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության
ինստիտուտի փոխտնօրեն



Տ. Ս. Դավայան

17.02.2026 թ.